

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2022-3-3-Ա

ք. Երևան

28.02.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկեց 2021 թվականի հունիսի 17-ին արտոնագրային հավատարմատար Լիլիթ Ակոպովայի կողմից ներկայացված՝ «Գրանդ Քենդի» ՍՊԸ ընկերության (Երևան, Մասիսի 31, AM) «GRAND» (No20200865) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական է ավելի վաղ ապրանքային նշանին, որը գրանցված է նույն ապրանքների և (կամ) ծառայությունների համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն նույնական է նույն ապրանքների և ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «GRAND» («Գրանդ քենդի» ՍՊԸ Երևան, Մասիսի 31 (AM), N 25920, 20.05.2017) ապրանքային նշանին: Ի լրումն վերը գրվածի, նշենք նաև, որ չնայած այն հանգամանքի, որ Ձեր կողմից ներկայացված գրության մեջ նշված է, որ հայտարկված նիշն ի տարբերություն գրանցված N 25920 ապրանքային նշանի գույնի, այն է՝ «Reflex Blu», ներկայացված է՝ «Reflex Blu C Pink» գույնով, չի համապատասխանում իրականությանը, քանի որ հայտի 5.11-րդ կետում, որպես ապրանքային նշանի գույն, որի համար խնդրարկվում է պահպանությունը, նշված է «Reflex Blu» գույնը, որն էլ համապատասխանում է 5.1-րդ կետում զետեղված նիշի պատկերի գույնին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների համար, բացառությամբ՝ 29-րդ դասի «կաթ և կաթնամթերք» ապրանքների համար, քանի որ հակադրված գրանցված «GRAND» (No25920)

ապրանքային նշանի ապրանքների և ծառայությունների ցանկը կրճատվել է թողնելով 29-րդ դասի «կաթ և կաթնամթերք» ապրանքները:

Արտոնագրային հավատարմատար Ալբինա Նազարյանը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մասնակի բավարարել արտոնագրային հավատարմատար Լիլիթ Ակոպովայի կողմից ներկայացված «GRAND» (No20200865) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը, կրկնական փորձաքննության որոշումն մասնակի չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ հայտարկված բոլոր ապրանքների և ծառայությունների համար, բացառությամբ՝ 29-րդ դասի «կաթ և կաթնամթերք» ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ